

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԷԼԵՆ ՍԱՄՎԵԼԻ

**ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու)
մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Կարապետյան Իգոր Կարապետի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Ֆլյան Լուսինե Հրանտի

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Ասատրյան Սուսաննա Պարզևի

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի մայիսի 31-ին, ժամը 12⁰⁰-ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի, 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի ապրիլի 18-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

մանկավարժական գիտությունների

թեկնածու, դոցենտ



Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը.

Օտար լեզվի ուսուցման և ուսումնառության հիմնական նպատակը հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումն ու զարգացումն է: Որպես խոսքային գործունեություն իրականացնելու կարողունակություն՝ հաղորդակցական կոմպետենցիան ենթադրում է տարբեր մշակութային, հասարակական, պատմական, հոգեբանական ենթատեքստերում և իրադրություններում հաղորդակցվելու կարողություն, համապատասխան հաղորդակցական վարքագծի ձևավորվածություն: Օտար լեզու սովորել նշանակում է ուսումնասիրել և յուրացնել ոչ միայն լեզուն, այլև տվյալ լեզուն ներկայացնող մարդկանց մշակույթը, հասարակական հարաբերությունները, պատմությունը, մենթալիտետը, հաղորդակցական վարքագծի մոդելները և այլն:

Այսպիսով, հաղորդակցական-լեզվական կոմպետենցիայի կարևոր բաղադրիչ են համարվում հանրալեզվաբանական, գործաբանական, միջմշակութային, խոսութային, հանրամշակութային և այլ կոմպետենցիաները: Նշված կոմպետենցիաների բովանդակային բնութագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք փոխկապակցված են հատկապես գործառական մակարդակում:

Միջմշակութային հաղորդակցության իրականացման կարևոր պայման է հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորումը և զարգացումն օտար լեզվի ուսուցման բոլոր փուլերում: Մի կողմից, տարբեր հանրամշակութային ենթատեքստերում դժվար չէ հասկանալ գործաբանական տեքստերի իմաստը: Մյուս կողմից՝ դժվարություններ են առաջ գալիս, պայմանավորված սովորողների ոչ բավարար լեզվական մակարդակով, հենքային գիտելիքներով: Միայն նոր բառապաշարի աստիճանական, շարունակական զարգացումը չի տալիս ցանկալի արդյունք, եթե սովորողները հաշվի չեն առնում բառի կիրառման հանրամշակութային ենթատեքստը:

Հանրամշակութային տեղեկատվություն պարունակող տեքստերը կարող են ներկայացնել ինչ-որ ապրանքի, հաստատության լոգո, ապրանքանիշ, հայտարարություն, գովազդ: Դրանք կարող են լինել կրեոլ տեքստեր, խոսույթներ, վիրտուալ խոսույթներ և գերտեքստեր: Հանրամշակութային բովանդակության տեքստի

շուրջ աշխատանքը նպաստում է ստեղծագործական, քննադատական մտքի զարգացմանը:

Հետազոտության խնդիրները լուծելու ընթացքում կարևորվում են այն աշխատանքները, որոնք բացահայտում են ուսուցողական նպատակներով կիրառվող տեքստի հանրամշակութային բաղադրիչները: Սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման հիմնախնդրին են անդրադարձել են մի շարք գիտնականներ (Т.Н.Астафурова, С.С.Беляева, И.Л.Бим, М.А.Богатырева, Л.А.Борходоева, Г.Г.Жоглина, Л.Н.Полушина, И.Э.Риске, В.В.Сафонова, Н.Г.Соколова, Г.д.Томахин, Н.Б.Шиханян, И.И.Халева, В.В.Сафонова, В.П.Фурманова, Г.Д.Томахин, С.Г.Тер-Минасова, И.А.Цатурова, Р.П.Мильруд, G.Zarate, S.Sauvignon, J.-R.Ladmiral, E.Berard, Van Ek, J.Trim, D.Coste, G.Neuner, M.Byram, J.Demorgon և այլք): Մասնավորապես, կարելի է առանձնացնել Կ.Ս.Մխիթարյանի թեկնածության կանոնադրությունը, որը վերաբերում է գործարարական անգլերենի դասընթացում գովազդային տեքստերի ընտրության և ուսուցման հիմնախնդրին: Տեքստի գործաբանական, հանրամշակութային հայեցակերպերին են անդրադարձել Ա.Ռ.Ապրեսյանը, Ա.Մարությանը, Ս.Մելքոնյանը, Ա.Հ.Նազարյանը, Հ.Զ.Պետրոսյանը, Ա. Սուքիասյանը:

Կարևորվում է Հ.Վ.Հովհաննիսյանի «Գործաբանական իրազեկության զարգացման հիմնախնդիրը տնտեսագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի դասընթացում» ատենախոսությունը, որտեղ բացահայտված է տնտեսագիտական կողմնորոշման տեքստերի գործաբանական հայեցակերպը: Լ.Ռ.Սանոյանն ուսումնասիրության առարկա է դարձրել «Անգլերենի ուսուցիչների լեզվամշակութային իրազեկության զարգացման հիմնախնդիրը Հայաստանում»: Սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից կարևորվում են լեզվամշակութային լակունաների և իրակությունների հաղթահարման հիմնախնդրին նվիրված աշխատանքները (Е.Н. Соловова, Е.А. Кривцова և այլք): Հետազոտության իրականացման մեթոդաբանության տեսանկյունից առանձնանում են լեզվակիրների խոսքային վարկեցողության բառերի ազգամշակութային հայեցակերպը լուսաբանող աշխատանքները (М.Ж.Базаева, Е.М.Верещагин և այլք):

Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման մեթոդիկա մշակելուն կարող են նպաստել միջմշակութային և բազմամշակութային կրթության հայեցակարգերը (Մ.Օ.Գյոդակյան, Բ.Մ.Եսաջանյան, Ի.Կ.Կարապետյան և այլք): Ռ.Գ.Կուլիկյանն իր՝ «Անգլերենի երկրագիտական ենթալեզվի ուսուցման կազմակերպման հիմնախնդիրը» ատենախոսության մեջ դիտարկում է լեզվաերկրագիտական կոմպետենցիան՝ որպես հաղորդակցական և մասնագիտական կոմպետենցիաների կարևորագույն բաղադրիչ: Ռ.Յ.Խաչատրյանն իր ատենախոսության մեջ հիմնավորում է ուսանողների միջմշակութային հաղորդակցության կարողությունների ձևավորման մոդելը, որի կարևոր բաղադրիչ է հանրամշակութային կոմպետենցիան:

Հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման գործընթացում կարևորվում է բնագրային տեքստի, մասնավորապես, գործաբանական տեքստի շուրջ աշխատանքը: Գործաբանական տեքստերն ամբողջական պատկերացում են տալիս լեզվակիրների կյանքի ու կենցաղավարության, կարծրատիպերի, ավանդույթների և սովորույթների, ընդհանուր առմամբ, հաղորդակցական վարքագծի մասին:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի շարունակական զարգացման, համապատասխան տեքստերի և այլ ուսուցման միջոցների ընտրության, արդյունավետ վարժությունների համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ, հաշվի առնելով սովորողների լեզվական մակարդակը, նախասիրությունները, ճանաչողական դրդապատճառները և մասնագիտական-հեռանկարային պահանջմունքները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ.

Սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ.

Ավագ դպրոցում անգլերենի ուսուցման գործընթացում հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մեթոդական համակարգն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.

Սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման տեխնոլոգիաների և ռազմավարությունների ուսումնասիրումն ու հանրամշակութային

կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մեթոդական համակարգի մշակումն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ.

Եթե հաղորդակցական - ճանաչողական մոտեցման տեսանկյունից դասակարգվեն անգլերեն գործաբանական տեքստերի ընտրության սկզբունքները, բացահայտվեն դրանց վերլուծության միջոցով լեզվակիրների հաղորդակցական վարքագծի առանձնահատկությունները, բացահայտել հանրամշակութային բառապաշարի առանձնահատկությունները հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից, փորձարարական ուսուցման ընթացքում կիրառվեն հանրամշակութային բառապաշարի յուրացման հաղորդակցական-ճանաչողական ռազմավարություններ, ապա հնարավոր կլինի մշակել սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման արդյունավետ մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. ֆասակարգել ուսուցողական նպատակներով գործաբանական տեքստի ընտրության սկզբունքները,

2. սահմանել «հանրամշակութային կոմպետենցիա» հասկացությունը սովորողների հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման համատեքստում,

3. բնութագրել հանրամշակութային փոխներթափանցման հաղթահարման եղանակներն ու ձևերը,

4. բացահայտել հաղորդակցական - ճանաչողական մոտեցման մեթոդաբանության տեսանկյունից սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները,

5. մշակել գործաբանական տեքստի շուրջ աշխատանքի վարժությունների համակարգ,

6. փորձարարական ուսուցման միջոցով մշակել մեթոդական համակարգ և հիմնավորել ներկայացվող մոդելի և մեթոդական համակարգի արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ հիմքում ընկած են հայրենական և արտերկրի մեթոդաբանների, լեզվաբանների, մանկավարժ-մեթոդաբանների տեսությունները և մոտեցումները.

- միջմշակութային (E.Burwitz-Meltzer, M.Byram, E.Tarone, Д.Б.Гудков, Д. Г. Кузарь, Л.Н.Клейнер, Л. Цзинцзин և այլք),

- հաղորդակցական (Б.Ю.Городецкий, И.М.Кобозева, И.Г.Сабурова, О. Н. Ермакова, Е.А.Земская, А.А.Кузнецова, М.Рингл, Б.Брюс, E.Burwitz-Meltzer, A. Goncalves-Matos և այլք),

- հանրամշակութային (B.Kachru, C.Kramersch, B.Tomalin & S.Stempleski, Т.И.Бекаревич, Е.А.Жежера, Т.А.Карпец, Е.Н.Соловова, Е.А.Кривцова և այլք),

- կոմպետենտային (Ի.Կ.Կարապետյան. Հ.Հ.Պետրոսյան և այլք),

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ.

Տեսական մեթոդներ՝

- տեքստի /խոսույթի/ խոսութային-գործաբանական վերլուծություն,
- սինթեզ,
- հանրամշակութային փաստերի էքստրոպոլյացիա,
- հանրամշակութային փաստերի և երևույթների ընդհանրացում:

Էմպիրիկ մեթոդներ՝

- հանրամշակութային գիտելիքների նախնական թեստավորում,
- անկետավորում, հարցում, հարցազրույց,
- հանրամշակութային լակունանների իմաստի վերականգնում,
- գործաբանական ենթատեքստի նկարագրություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.

1. դասակարգվել են անգլերեն գործաբանական տեքստերի ընտրության սկզբունքները,

2. բացահայտվել են դրանց վերլուծության միջոցով լեզվակիրների հաղորդակցական վարքագծի, հանրամշակութային բառապաշարի առանձնահատկությունները հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից,

3. փորձարարական ուսուցման ընթացքում կիրառվել են հանրամշակութային բառապաշարի յուրացման հաղորդակցական-ճանաչողական ռազմավարություններ,

4. մշակվել է սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման արդյունավետ մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Բացահայտված են գործաբանական տեքստի առանձնահատկությունները, դրանց ուսուցողական ներուժը սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման տեսանկյունից, հաղորդակցական-ճանաչողական մոտեցման տեսանկյունից հիմնավորված են բնագրերի, հանրամշակութային բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքները, նոր մեթոդաբանական դիրքերից ապացուցված է հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մոդելի արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Մշակված է գործաբանական տեքստի շուրջ աշխատանքի մեթոդական համակարգ, որի հիմքում ընկած են հանրամշակութային բառապաշարի յուրացմանը միտված խնդիրների վրա հիմնված առաջադրանքները: Մշակված վարժությունների մեթոդական համակարգն արդյունավետորեն կարելի է կիրառել ավագ դպրոցում անգլերենի ուսուցման գործընթացում: Հետազոտության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ նոր ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի ստեղծման, նոր դասընթացների նախագծման, դասերի պլանավորման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ապահովվում են հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման առանձնահատկությունների բացահայտմամբ, հաղորդակցական-ճանաչողական մոտեցման սկզբունքների հիման վրա մշակած վերլուծական ընթացակարգերով, հանրամշակութային երևույթների, իրողությունների լեզվաբանական, մասնավորապես, գործաբանական-խոսութային վերլուծությամբ, լակունանների և իրակությունների իմաստների բացահայտման ռազմավարությունների կիրառմամբ, սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացմանը միտված վարժությունների մշակմամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.

Հետազոտության արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Հետազոտությունն իրականացվել է ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում:

Հետազոտությունն իրականացվել է երեք տարվա ընթացքում հետևյալ փուլերով.

Առաջին փուլում (2019-2020) ուսումնասիրվել է հետազոտության թեմային վերաբերող գիտամանկավարժական, մեթոդական գրականություն, հստակեցվել է հետազոտության իրականացման փուլերը, բովանդակությունը, հիմնական հասկացություններն ու եզրույթները, նպատակն ու խնդիրները, ձևակերպվել է հետազոտության առարկան, առաջադրվել է նախնական վարկածը:

Երկրորդ փուլում (2020-2021) վերլուծվել են ավագ դպրոցականների մասնագիտական և հեռանկարային պահանջմունքները, լեզվական մակարդակը, ձևավորվել են ստուգողական և փորձարարական խմբերը:

Երրորդ փուլում (2021-2022) իրականացվել է փորձարարական ուսուցում, ընտրվել են հանրամշակութային ուղղվածություն ունեցող տեքստեր, մշակվել են նրանց շուրջ աշխատանքի վարժություններ: Հետազոտության վերջին փուլում ամփոփվել են նրա արդյունքները և առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը հիմնավորվել է համապատասխան փորձարարական ուսուցման արդյունքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ.

Հետազոտության արդյունքները ներդրվել են ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի հումանիտար և բնագիտական հոսքերում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են յոթ հոդվածում:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.

1. Անգլերեն գեղարվեստական բնագրերի ընթերցանությունը պետք է միտված լինի սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի՝ ուսումնասիրվող լեզուն ներկայացնող տվյալ երկրի, նրա պատմության, հոգևոր արժեքների, մշակութային ավանդույթների, լեզվակիրների մենթալիտետի, ազգային առանձնահատկությունների, բարքերի, սովորույթների, ինչպես նաև լեզվակիրների հաղորդակցական վարքագծի, խոսքային և ոչ խոսքային, հանրային նշույթավորված լեզվական միջոցների մասին գիտելիքների զարգացմանը:

2. Սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման տեսանկյունից առաջին պլան է մղվում հատկապես փոխհատուցող ռազմավարությունը, որի նպատակն է լրացնել լեզվակիրների հետ անմիջական շփման բացը: Այդ առումով կարևորվում են ծանոթագրությունները, ծանուցումները,

մեկնաբանությունները, լակունաների իմաստի բացահայտման, լրացման վարժությունները:

3. Ավագ դպրոցի անգլերենի դասագրքի բովանդակության հանրամշակութային բաղադրիչի ապահովումն անհրաժեշտ պայման է ժամանակակից անգլերենի խոսակցական լեզվակաղապարների ուսուցման, ազգամշակութային նշույթավորում ունեցող, անհամարժեք բառապաշարի յուրացման, սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման համար:

4. Առաջարկվող մեթոդական համակարգի հիմքում ընկած հանրամշակութային կոմպետենցիայի փուլային աստիճանական զարգացման մոդելը արդյունավետ է ուսուցման բոլոր փուլերում, քանի որ նրա կիրառման վերջնարդյունքը համապարփակ հենքային գիտելիքների ձևավորումն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, գծապատկերներից, աղյուսակներից, բնագիր տեքստերից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 146 էջ:

Ատենախոսության թեմայով տպագրված են 7 հոդվածներ, որոնց ցուցակը ներկայացված է սեղմագրի վերջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Աշխատանքի ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, պաշտանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին՝ **«Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման բովանդակային և գործառական առանձնահատկությունները»** գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին՝ **«Սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի հիմնական բաղադրիչները»** խորագրով ենթագլխում սահմանվում են «մշակույթ», «լեզվակիր», «առաջին լեզու», «երկրորդ լեզու», «միջմշակութային խոսող», «մշակութային կոմպետենցիա», «միջմշակութային կոմպետենցիա» հասկացությունները, վերլուծվում են հանրամշակութային կոմպետենցիայի հիմնական

բաղադրիչները, ներկայացվում են ուսումնական տեքստի տեսակները, տեքստի ընտրության հանրամշակութային չափանիշները, բնագրերի ընտրության սկզբունքները, հանրամշակութային կոմպետենցիան զարգացնող նյութերի ընտրության պահանջները, հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման միջոցները:

Երկրորդ՝ **«Գրական-գեղարվեստական տեքստը որպես սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման միջոց»** ենթաազխում դասակարգվում են ընթերցանության տեսակները, սահմանվում են բնագրերի ընթերցանության նպատակն ու խնդիրները, հանրամշակութային տեղեկատվության յուրացման տեսանկյունից վերլուծվում է Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» ստեղծագործությունը, կարևորվում է գեղարվեստական բնագրում ազգային նշույթավորված և մշակութային-նշույթավորված բառապաշարի շուրջ աշխատանքի արդյունավետությունը հատկապես էքստենսիվ ընթերցանության ժամանակ:

Երրորդ՝ **«Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման ռազմավարությունները»** ենթաազխում քննության են առնվում հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման ռազմավարությունները՝ հաշվի առնելով անգլերենի ուսուցման առանձնահատկություններն ավագ դպրոցում: Ընդհանուր բնութագրերով ներկայացված են անգլերենի ուսուցման այն ռազմավարությունները, որոնք արդյունավետ են սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման գործընթացում:

Սահմանվում են վերճանաչողական, ճանաչողական, հաղորդակցական, հուզական, փոխհատուցող, համեմատական և գրաֆիկական ռազմավարությունները: Խնդիր է դրվում հանրամշակութային երևույթների ուսուցանումն իրականացնել ոչ միայն սովորողների լեզվական աշխարհի, այլև նրանց՝ աշխարհի հասկացութային պատկերի ձևավորման տեսանկյունից:

Չորրորդ՝ **«Հաղորդակցական ձախողումների հաղթահարման հանրամշակութային հայեցակերպը»** ենթաազխում քննության են առնվում հաղորդակցական ձախողումների բովանդակությունը, պատճառները, դրանց հաղթահարման հանրամշակութային հայեցակերպը: Հստակորեն շեշտադրվում է այն գաղափարը, որ լեզվակիրների միջև տեղի ունեցող հաղորդակցության ձախողումները

հիմնականում տարբերվում են տարբեր լեզվական, մշակութային հանրություններ ներկայացնող մարդկանց հաղորդակցական ծախսողումներից:

Երկրորդ՝ **«Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը»** խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Անգլերենի հանրամշակութային բառապաշարի ուսուցման ռազմավարությունները»** ենթագլխում ընդհանուր գծերով վերլուծվում են անգլերենի հանրամշակութային բառապաշարի ուսուցման այն ռազմավարությունները, որոնք արդյունավետ է կիրառել ավագ դպրոցի անգլերենի ուսուցման հումանիտար հոսքում: Ներկայացվում են անգլերեն համարժեք /նորմատիվ/ և ոչ համարժեք բառապաշարի ուսուցման հիմնական ռազմավարությունները, հանրամշակութային լակունաների և իրակությունների իմաստի բացահայտման, վերականգման ռազմավարությունները:

Երկրորդ՝ **«Ավագ դպրոցի անգլերենի դասագրքերի բովանդակության հանրամշակութային բաղադրիչը»** խորագիրը կրող ենթագլխում վերլուծվում են ավագ դպրոցի անգլերենի դասագրքերը հանրամշակութային մոտեցման տեսանկյունից: Դասակարգվում են դասագրքերի ստեղծման ավանդական և ժամանակակից սկզբունքները: Ընդհանուր գծերով ներկայացվում է դասագրքերի բովանդակության մեջ հանրամշակութային բաղադրիչը՝ ազգամշակութային նշոյթավորում ունեցող, անհամարժեք բառապաշարը, լակունաները և իրակությունները:

Երրորդ՝ **«Հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման վարժությունների համակարգը»** ենթագլխում դասակարգվում և ներկայացվում են սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման վարժությունների համակարգը: նշվում է, որ վարժությունների համակարգ մշակելիս՝ հաշվի է առնված այն փաստը, որ տեքստի շուրջ աշխատանքը կարող է ընդհանուր պատկերացում տալ լեզվակիրների գեղագիտական, էթնոմշակութային և վարքագծային մոտեցումների, նորմերի, կարծրատիպերի մասին:

Ներկայացվում են փորձարարական ուսուցման երեք փուլերը՝ հաստատող, ձևավորող, ստուգողական հանրամշակութային կոմպետենցիայի մակարդակի ստուգման թեստը, որը կազմվում է՝ ըստ հանրամշակութային կոմպետենցիայի

բովանդակության, առաջարկվող ֆիլմի շուրջ աշխատանքի համար մշակված վարժությունների համալիրը, որը ներառում է համադրման, հարց ու պատասխանի, տեղակատվության որոնման, ընկալողական հմտությունների զարգացման առաջադրանքները: Հաջորդ փուլում առաջարկվում են նաև արտադրողական բնույթի առաջադրանքներ, որոնք միտված են խոսքային կարողությունների զարգացմանը: Հատկապես կարևորվում են հանրամշակութային լակունաները և իրոյթները ճանաչելու և խոսքի մեջ կիրառելու առաջադրանքները:

Նկարագրվում են փորձարարական ուսուցման ընթացքում կիրառված հանրամշակութային կարողունակությունները զարգացնող տարբեր հնարներ, որոնց հիման վրա մշակվել են վարժություններ: Առանձնացվում են նախադեպային տեքստերի յուրացման, այլ մշակույթները դրական հույզերով և զգացմունքներով ընկալելու, լեզվակիրների ազգային-հոգեբանական առանձնահատկությունները բացահայտելու, այլ մշակույթների ներկայացուցիչներին նկարագրելու, թիրախային մշակույթի նախադեպային երևույթները բացատրելու հնարներ:

Խնդիր է դրվում փորձարարական ուսուցման ընթացքում որոշել սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի մակարդակը, փորձարարական խումբը կազմել 25 աշակերտից, իսկ ստուգողական խումբը՝ 26 աշակերտից և փորձարարական ուսուցման նախնական և ավարտական փուլերում ստուգել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի 11-12-րդ դասարանների աշակերտների հանրամշակութային կոմպետենցիայի հիմքում ընկած կարողությունները: Դրանք ներկայացված են աղյուսակ 1-ում.

Հանրամշակութային կոմպետենցիայի հիմնարար կարողությունները՝	Փորձարարական խումբ		Ստուգողական խումբ	
	Աշակերտների թիվը – 25		Աշակերտների թիվը – 26	
	Մինչև փորձը	Փորձից հետո	Մինչև փորձը	Փորձից հետո
1. ճանաչել տեքստում հանրամշակութային բովանդակության բառապաշարը,	14	18	13	15
2. ճանաչել տեքստում հանրամշակութային լակունաները, իրակությունները,	11	15	10	13

3. ճանաչել տեքստում հանրամշակութային դարձվածքային միավորները,	14	17	14	15
4. հասկանալ և մեկնաբանել հանրամշակութային բառապաշարային միավորները,	11	15	11	13
5. հասկանալ և մեկնաբանել հանրամշակութային անհամարժեք բառապաշարը,	12	16	12	14
6. համեմատել տեքստում հանդիպող հանրամշակութային բառապաշարն անգլերեն և հայերեն,	12	16	12	14
7. մեկնաբանել հանրամշակութային բովանդակության անգլերեն ասացվածքները,	13	16	12	14
8. բացահայտել հաղորդակցական սխալներ՝ հանրամշակութային հենքային գիտելիքների մակարդակում,	11	16	11	14
9. բացահայտել հաղորդակցական սխալները հաղորդակցվողների խոսքային վարքագծի մակարդակում,	11	15	11	13
10. ճիշտ օգտագործել խոսքային վարվեցողության բառերը:	12	17	12	15

Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ սովորողները ավելի լավ են յուրացնում տեքստում հանդիպող նոր բառապաշարը, եթե ընդհանուր պատկերացում են ունենում հանրամշակութային բովանդակության բառապաշարի մասին: Ընդ որում, սովորողների հանրամշակութային բառապաշարն ունի հիմնականում խոսակցական ուղղվածություն: Բավականին դժվար է մոդելավորել լեզվակիրներին բնորոշ այնպիսի իրական լեզվական իրադրություններ, որոնք կնպաստեն ոչ միայն տեղեկատվական (information gap), այլև մտային (mind) բացերի լրացմանը: Այդ առումով կարևորվում է լականանների, հանրամշակութային դարձվածքային միավորների, ասացվածքների, ասույթների, փաղաքշական արտահայտությունների, անունների փաղաքշական ձևերի ուսուցումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման կարևոր պայման է մշակութաբանական բնագրայնության ապահովումը: Այդ համատեքստում առաջնային է դառնում բնագրայնության սկզբունքը, որը կիրառելով հնարավոր է դառնում ճիշտ ընտրած գրական տեքստի, ֆիլմի, ակնարկի միջոցով ծանոթանալ և յուրացնել լեզվակիրների կենցաղավարությունը, սովորույթները, ավանդույթները, կարծրատիպերը, ընդհանուր առմամբ՝ «աշխարհի պատկերը»:

2. Հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից օտար լեզվի ուսուցման միավոր է ոչ թե բառը, արտահայտությունը, նախադասությունը, այլ հասկացույթը /կոնցեպտը/, նախադեպային տեքստը: Սովորողները պետք է յուրացնեն նախ և առաջ ոչ թե լեզվական, այլ մենթալ կամ մտածելակերպի միավորները: Այդ համատեքստում ցանկացած ժողովրդի մենթալիտետ ինչ-որ առումով իրակություն է. մշակութային իրակություն:

3. Ձևավորվել են բավականին հարուստ ավանդույթներ լեզվական /լեզվաբանական/, քերականական, բառային, հնչյունական, իմաստաբանական, ոճաբանական սխալների ուղղման ոլոտներում: Սակայն գործաբանական - հանրամշակութային սխալների բացահայտման և ուղղման մեթոդիկան դեռևս նոր է զարգանում: Պատճառներից մեկն այն է, որ մեթոդիստները դժվարությամբ են յուրացնում խոսութային-գործաբանական վերլուծության ընթացակարգերը, ընդհանրապես մեթոդաբանությունը:

4. Լակունաների իմաստի բացահայտման ռազմավարությունը պետք է կիրառել ավագ դպրոցում նախ և առաջ լակունաները հասկանալու նպատակով: Միշտ չէ, որ նպատակահարմար է դրանք թարգմանել: Նպատակահարմար չէ նաև խնդիր դնել լակունաների թարգմանության միջոցով վերստեղծել տվյալ տեքստի հանրամշակութային կոլորիտը: Ճիշտ ընտրված ծանուցումները և մեկնաբանությունները կարող են օգնել սովորողներին լրացնել տեքստում հանդիպող լակունաները:

5. Հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման համար նախատեսված վարժությունների համակարգ մշակելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել

լեզվակիրների գեղագիտական, էթնոմշակութային և վարքագծային մոտեցումները, նորմերը, կարծրատիպերը, ընդհանուր առմամբ՝ ոչ միայն սովորողների լեզվական աշխարհի, այլև նրանց աշխարհի հասկացութային պատկերները:

6. Փորձարական ուսուցման ընթացքում և արդյունքում հիմնավորվեց հատկապես հանրամշակութային կոմպետենցիայի փուլային աստիճանական զարգացման մոդելի կիրառման արդյունավետությունը, որն ընկած է հանրամշակութային արտահայտությունների լրացման, ինչպես նաև թարգմանական, լականանների վերականգման, տեղեկատվական և մտավոր բացերի լրացման վարժությունների արդյունավետության հիմքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Ավետիսյան Է.Ս. - Օտար լեզվի ուսուցչի կողմից հարալեզվական միջոցների կիրառումը որպես դասին լեզվական գիտելիքների արդյունավետ յուրացման միջոց, Հայագիտական հանդես, N 1 (50), Երևան 2021, էջ 176-181, ISSN 1829-0531
2. Ավետիսյան Է.Ս. - Հաղորդակցական ձախողումների հաղթահարման հանրամշակութային հայեցակերպը, Հայագիտական հանդես, N 4 (53) Երևան 2021, էջ 167-178, ISSN 1829-0531
3. Ավետիսյան Է.Ս. - Գեղարվեստական տեքստը որպես ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման միջոց, Ռուսագիտության արդի հիմնախնդիրները գիտամեթոդական հանդես, N 8 (12), Երևան 2021, էջ 183-200, ISSN 1829-4820
4. Ավետիսյան Է.Ս. - Գրական տեքստը որպես սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման միջոց, Հայագիտական հանդես N 3-4 (57-58), Երևան 2022, էջ 224-238, ISSN 1829-0531
5. Ավետիսյան Է.Ս. - Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման ռազմավարությունները, Ռուսագիտության արդի հիմնախնդիրները գիտամեթոդական հանդես, N 9 (13), Երևան 2022, էջ 250-256, համահեղինակ Ի. Կարապետյան

6. Ավետիսյան Է.Ս. - Strategies for teaching english socio-cultural lacunae, Foreign language for special purposes, 2022-1-2 (50-67) , ISSN 1829 -4065
7. Ավետիսյան Է.Ս. - Fiction Text as a Means of Forming Learners' Sociocultural Competence, Wisdom Periodical, Vol. 25 No. 1 (2023): 1-2023, pp. 119-128 co-author Igor Karapetyan

ЭЛЕН САМВЕЛОВНА АВETИСЯН
СТРАТЕГИЯ РАЗВИТИЯ СОЦИОКУЛЬТУРНОЙ КОМПЕТЕНЦИИ
СТАРШЕКЛАССНИКОВ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02. «Методика преподавания и обучения» (английский язык). Защита диссертации состоится 31-го мая 2023г. в 12.⁰⁰ ч. на заседании специализированного совета 020 “Педагогика” ВАК РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Главной целью преподавания и изучения иностранного языка является формирование и развитие коммуникативной компетенции. Как и способность осуществлять речевую деятельность, коммуникативная компетентность предполагает способность к общению в различных культурных, социальных, исторических, психологических контекстах и ситуациях, формирование адекватного коммуникативного поведения. Изучение иностранного языка означает изучение и овладение не только языком, но и культурой, социальными отношениями, историей, менталитетом, моделями коммуникативного поведения и т. д. людей, говорящих на данном языке.

Актуальность исследования обусловлена необходимостью постоянного развития социокультурной компетентности старшеклассников, подбора соответствующих текстов и других средств обучения, создания эффективной системы упражнений с учетом языкового уровня, предпочтения, познавательные мотивы и профессиональные, перспективные потребности учащихся.

Цель исследования - Изучить технологии и стратегии формирования и развития социокультурной компетентности учащихся, разработать методическую систему формирования и развития социокультурной компетенции.

Объект исследования:

Это процесс формирования социокультурной компетентности старшеклассников.

Предмет исследования:

Это методическая система формирования и развития социокультурной компетентности в процессе обучения английскому языку в старшей школе.

Задачи исследования:

1. классифицировать принципы отбора прагматического текста в учебных целях,
2. определить понятие «социокультурная компетенция» в контексте развития коммуникативной компетентности учащихся,
3. охарактеризовать методы и формы преодоления межкультурной интерференции,
4. выявить особенности формирования и развития социокультурной компетенции учащихся в контексте методики коммуникативно-когнитивного подхода,
5. разработать систему упражнений по работе над прагматическим текстом,
6. обосновать эффективность представленной модели и методической системы путем экспериментального обучения.

Научная новизна исследования:

1. Классифицированы принципы отбора англоязычных прагматических текстов,
2. выявлены особенности коммуникативного поведения носителей языка, особенности культурной лексики с точки зрения развития коммуникативных способностей,
3. были применены в ходе экспериментального обучения коммуникативно-когнитивные стратегии овладения социокультурной лексикой,
4. разработана эффективная методическая система развития социокультурной компетентности старшеклассников.

Теоретическая значимость исследования:

Выявлены особенности прагматического текста, их образовательный потенциал с точки зрения формирования и развития социокультурной компетенции обучающихся, классифицированы с точки зрения коммуникативно-познавательного подхода принципы отбора аутентичных текстов, социокультурной лексики, экспериментально обоснована и доказана эффективность модели формирования и развития социокультурной компетентности.

Практическая значимость исследования:

Разработана методическая система работы над прагматическим текстом, основу которой составляют задания, основанные на проблемах, направленных на овладение социокультурной лексикой. Разработанная методическая система может быть эффективно применена в процессе обучения английскому языку в старшей школе. Результаты исследования могут стать основой для создания новых учебных пособий, учебников, разработки новых курсов, планирования уроков.

Структура и объем работы. Диссертация объемом 146 страниц состоит из введения, двух глав, заключения, списка литературы и приложений.

ELEN S. AVETISYAN

STRATEGY FOR THE DEVELOPMENT OF SOCIO-CULTURAL COMPETENCE OF HIGH SCHOOL STUDENTS IN THE PROCESS OF TEACHING ENGLISH

Thesis for degree of candidate for pedagogical sciences, specialty 13.00.02 – Teaching and Learning Methodology (English Language). The defense of thesis will be held at 12:00 on the 31th of May 2023, at the session of the Special Board 020 SCC (Supreme Certifying Committee) to award scientific degree at the Kh.Abovyan Armenian State Pedagogical University: 0010, 17 Tigran Mets, Yerevan.

SUMMARY

The relevance of research: The main goal of teaching and learning a foreign language is the formation and development of communicative competence. As well as the ability to carry out speech activity, communicative competence implies the ability to communicate in various cultural, social, historical, and psychological contexts and situations, the formation of adequate communicative behavior. Learning a foreign language means learning and mastering not only the language but also the culture, social relations, history, mentality, patterns of communicative behavior, etc. of people who speak this language.

The relevance of the study is due to the need for constant development of the socio-cultural competence of high school students, the selection of appropriate texts and other

teaching aids, the creation of an effective system of exercises, taking into account the language level, preferences, cognitive motives, and professional, prospective needs of students.

Purpose of the study:

To study the technologies and strategies for the formation and development of sociocultural competence of students, to develop a methodical system for the formation and development of sociocultural competence.

Object of study:

This is the process of forming the socio-cultural competence of high school students.

Subject of study:

This is a methodical system for the formation and development of socio-cultural competence in the process of teaching English in high school.

Objectives of the research:

1. Present the principles for selecting a pragmatic text for educational purposes,
2. Define the concept of "sociocultural competence" in the context of the development of students' communicative competence,
3. Describe the methods and forms of overcoming intercultural interference,
4. To identify the features of the formation and development of sociocultural competence of students in terms of the methodology of the communicative-cognitive approach,
5. Develop a system of exercises for working on a pragmatic text,
6. Substantiate the effectiveness of the presented model and methodical system through experimental learning.

Scientific novelty of the research:

1. It classifies the principles of the selection of English-language pragmatic texts,
2. It reveals the characteristic features of the communicative behavior of native speakers, the peculiarities of socio-cultural vocabulary from the point of view of the development of communicative abilities,
3. It applies in the course of experimental training, communicative-cognitive strategies for mastering sociocultural vocabulary,

4. It develops an effective methodical system for the development of the socio-cultural competence of high school students.

Theoretical significance of the research

It reveals the characteristic features of the pragmatic text, and their educational potential in terms of the formation and development of the sociocultural competence of students classifies the principles for selecting authentic texts and sociocultural vocabulary from the point of view of the communicative-cognitive approach, and experimentally substantiates and proves the effectiveness of the model for the formation and development of sociocultural competence.

Practical significance of the research:

It develops a methodical system of work on a pragmatic text, based on problem-based tasks, aimed at mastering sociocultural vocabulary. The developed methodical system can be effectively applied in the process of teaching English in high school. The results of the research can become the basis for the creation of new teaching aids, and textbooks, the development of new courses, and lesson planning.

The structure and volume of the research: The dissertation consists of 146 pages, an Introduction, 2 Chapters, a Conclusion, References, Bibliography, and Appendices.

